

Հայ-ռուսական համալսարանում գործող
ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0051, Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Հովսեփ Էմինի փող., 123)

Կ Ա Ր Ծ Ի Ք Ը

Պաշտոնական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Աշոտ Խաչատրյանի

Անահիտ Նալբանդյանի՝ «Նախադեպային իրավունքի զարգացման
հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական
բարեփոխումների համատեքստում» վերտառությամբ՝ ԺԲ.00.01 - «Պետության և
իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների
պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված
ատենախոսության վերաբերյալ

Անահիտ Նալբանդյանի ատենախոսության թեման ինքնին արդիական է,
ինչը պայմանավորված է նախադեպային իրավունքի՝ որպես իրավական
ինքնատիպ համակարգի գոյությամբ, որտեղ դատական նախադեպը ճանաչվում է
որպես իրավունքի աղբյուր:

Միաժամանակ, հետազոտության առարկա ոլորտում «նախադեպային
իրավունք» և «դատական նախադեպ» հասկացությունների հստակեցման ու
դրանց բովանդակային նշանակության շուրջ առկա գիտական բանավեճերը
շարունակվում են նաև մերօրյա ժամանակներում, հատկապես առանձին
պետությունների սահմանադրական և դատաիրավական բարեփոխումներով
պայմանավորված:

Ակնհայտ է, որ իրավունքի ընդհանուր տեսության մեջ բացակայում է
միասնական հայեցակարգ նախադեպային իրավունքի ինչպես գիտական
իմաստավորման առումով, այնպես էլ դրա իրավական բովանդակության
միասնական իրավաընկալման տեսանկյունից: Ավելին, նախադեպային
իրավունքի տեսության հիմնահարցերի ոչ ճիշտ իրավաընկալումները կարող են

նեգատիվ ներգործություն ունենալ իրավական կարգավորման կառուցակարգերի վրա:

Այդուհանդերձ, իրավական համակարգի զարգացման ու նշանակության վերաբերյալ տեսակետների միասնության բացակայության պայմաններում «նախադեպային իրավունքի» և «դատական նախադեպի» տրամաբանական կառուցվածքի և դրանց փոխգործակցության վերաբերյալ տեսական հետազոտությունները դրսևորվում են տարաբնույթ մոտեցումներով, և արդյունքում, կանխորոշում են, մի դեպքում, «դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր» թեզով պայմանավորված իրավական համակարգի արդիականացման կարևորությունը, իսկ, մեկ այլ դեպքում, տվյալ թեզից ուղղակիորեն հրաժարում՝ ի նպաստ դարձյալ նույն համակարգի զարգացմանը:

Սակայն, ներկա ժամանակաշրջանում հետևելով իրավագիտության ընդհանուր ավանդույթներին, ինչպես նաև հաշվի առնելով ժամանակակից աշխարհակարգի հետ առնչվող իրողություններն ու դրանցով պայմանավորված իրավական գործընթացների առկայությունը, կարծում եմ, խրախուսելի է հեղինակի կողմից նման աշխատանք ներկայացնելը, որի հիմքում առաջադրված են, մասնավորապես, հետազոտական կարևոր նշանակություն ունեցող այնպիսի խնդիր, ինչպիսին է՝ ազգային իրավունքի համակարգում օրենսդրական բացերի, անորոշությունների և իրավական հակասությունների հաղթահարման գործընթացում դատական նախադեպի և դատական պրակտիկայի դերի, վիճակի ու հիմնահարցերի հետազոտումը:

Հեղինակը գիտական բարեխղճությամբ ու անհրաժեշտ հետազոտական խորությամբ անդրադարձ կատարելով ընդհանուր իրավունքի համակարգում դատական նախադեպի առանձնահատկությունների ընդհանուր տեսություն մշակելու հիմնահարցին՝ համակարգային վերլուծություն է կատարել մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավական համակարգում նախադեպային իրավունքի տեղի ու դերի շուրջ ձևավորված իրավական իրողությունները և առաջադրել նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառման ու դատական պրակտիկայի միասնականության ապահովման տեսական և կիրառական մոտեցումներ:

Ընդհանուր առմամբ հեղինակն ուսումնասիրել է համարժեք մասնագիտական գրականություն և վերլուծել թեմային առնչվող գիտագործնական նյութ: Հեղինակը դրսևորել է թեմային առնչվող տեսական աղբյուրների համարժեք իրազեկվածություն, ինչպես նաև դրանցից օգտվելու և պատշաճ վերլուծություններ կատարելու անհրաժեշտ ունակություն:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքը դարձնելու առավել տրամաբանական ու ամբողջական, մասնավորապես առանձին հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրությունը նպաստել է մասնավոր ու կոնկրետ խնդիրների ամբողջական հետազոտությանը:

Հեղինակի կողմից, որպես ատենախոսության հիմնադրույթներին առնչվող հրատարակված մենագրությունում և գիտական հոդվածներում համարժեքորեն են արտացոլում պաշտպանության ներկայացվող եզրահանգումները:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը դրսևորել է ինքնուրույն հետազոտություն կատարելու և դրանց արդյունքում հնարավորինս ինքնատիպ ու որոշակի հիմնավորումներով ուղեկցվող դատողություններ անելու անհրաժեշտ ունակություն:

Ատենախոսությունը, որոշ բացառություններով հանդերձ, շարադրված է հստակ ու, միաժամանակ պատշաճ գիտական լեզվաոճով, հեղինակը կարողացել է ապահովել նյութի շարադրանքի ներքին տրամաբանությունը:

Պաշտպանության ներկայացված առանձին հիմնադրույթները, կարծում եմ, համապատասխանում են ներկայացվող պահանջներին:

Միաժամանակ, աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ ստորև ներկայացնում եմ հետևյալ նկատառումները.

1. Ընդհանուր բնույթի նկատառումների շրջանակում կցանկանայի նշել հետևյալները.

Ա) Չթերագնահատելով գրախոսության ներկայացված աշխատանքի վերաբերյալ նախնական փորձագիտական եզրակացությունների արդյունքների արժանահավատությունը, այդուհանդերձ ատենախոսության թեմայի և

բովանդակության համալիր վերլուծության արդյունքներով պայմանավորված կցանկանայի ներկայացնել հետևյալը, որ աշխատանքն առավելապես կարող է համապատասխանել «դատական իրավունք» կամ «հանրային իրավունք» գիտական շիֆրերին, քանի որ հետազոտության մեթոդաբանական ու տեսական-իրավական անհրաժեշտ փաստարկներն ու հիմնավորումներն հիմնված են Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի արդիականացման, այդ թվում դատաիրավական բարեփոխումների համատեքստում նախադեպային իրավունքի զարգացման հեռանկարների վրա: Այդպիսի բովանդակություն կամ նունաբովանդակ ձևակերպում ունի նաև ատենախոսության թեմայի վերտառությունը:

Կարծում եմ, որ ատենախոսը ատենախոսության պաշտպանության շրջանակում անդրադարձ կկատարի՝ հիմնավորելով աշխատանքի թեմայի և հայցվող գիտական շիֆրի համապատասխանության մասին հիմնահարցը:

Բ) Հեղինակի կողմից ատենախոսական հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանի և օգտագործված գրականության շրջանակներում հետազոտության առարկա են դիտարկվել գործնականում անցյալ դարաշրջանի 80-90-ական և 2000-ական թվականների աշխատանքի թեմային նվիրված մասնագիտական գրականություն և իրավական ակտեր: Այդ կապակցությամբ կարծում եմ, որ՝ նախադեպային իրավունքի, դատական նախադեպի և դատական պրակտիկայի վերաբերյալ, ինչպես նաև ժամանակակից իրավագիտության առջև ծառացած խնդիրների, տեսության և պրակտիկայի հիմնահարցերի համալիր վերլուծության մասով, թերևս, ավելի ցանկալի արդյունքներ կարող էր արձանագրվել, եթե աշխատանքի շրջանակում հետազոտության առարկա դիտարկվեին նաև արդի ժամանակաշրջանի ու զարգացած աղբյուրագիտությանը հայտնի մենագրություններ և գիտական հոդվածներ:

2. Այնուհետև, առանձին նկատառումների շրջանակում անհրաժեշտ է նաև նկատել, որ.

ա) Գրախոսվող աշխատանքի շրջանակում հեղինակը՝ որպես պաշտպանության ներկայացված դրույթ, դիտարկում է դատական նորմաստեղծ գործունեության բովանդակության ու ձևերի, դրա գիտական հիմնավորվածության

և կիրառման սահմանների «բացահայտումը» (կետ 2, էջ 10): Սակայն, աշխատանքի բովանդակության համակարգային վերլուծությունից այդպես էլ նպարզ չի դառնում, թե, ինչպիսի՞ «բացահայտման» մասին կարող է խոսք լինել, եթե այն իր համարժեք ձևակերպումները չի ստացել:

Հիշատակված նորույթի կապակցությամբ, կարծում եմ, հեղինակի կողմից անհրաժեշտ է հստակեցնել և ներկայացնել համապատասխան պարզաբանումներ, քանի որ այդ «նորույթը» այդպես էլ չի բովանդակում այնպիսի պատասխան, որը գիտական իմաստավորման առումով պետք է բխեցվեր հենց գիտական նորույթի բովանդակությունից:

բ) Աշխատանքի 1.1-րդ 1.2-րդ ենթագլուխների շարադրանքի վերլուծության արդյունքներից (էջ 22-34) և պաշտպանության ներկայացված 3-րդ կետի դրույթի բովանդակությունից ելնելով, հեղինակը՝ որպես գիտական նորույթ դիտարկում է հետևյալը, որ. «(...) գտնում ենք, որ նշված դատական ակտերը կարող են լիովին ճանաչվել իրավունքի լեգիտիմ աղբյուրներ, ինչպես նաև գաղափարական և իրավական հիմք հանդիսանալ օրինաստեղծ գործունեության համար» (էջ 10):

Անհրաժեշտ է նկատել, որ ներկայացված տեսակետը հանրաճանաչ դրույթ է, առավել ևս, այդ մասին հեղինակը ևս կատարում է պնդում առ այն, որ՝ «Ներկայումս գիտնականների ճնշող մեծամասնությունը ընդունում է, որ դատական նախադեպը և դատական պրակտիկան համարվում են իրավունքի աղբյուրներ» (էջ 31): Այս դեպքում անհրաժեշտ է հստակեցնել, թե գիտականության ո՞ր տարրի, տեսակետի կամ դիրքորոշման մասին խոսք կարող է լինել, որը կբավարարեր գիտական նորույթին ներկայացվող պահանջներին:

Նույն դիտարկումը վերաբերում է պաշտպանության ներկայացված 4-րդ կետի դրույթին, ըստ որի՝ «Նորույթը կայանում է նրանում, որ դատական նախադեպը ՀՀ իրավունքում ներկայացվում է որպես հիբրիդային իրավական ինստիտուտ, մինչդեռ նախկինում այն կամ ընդհանրապես չէր սահմանվում, կամ դիտարկվում էր բացառապես որպես օտար իրավական երևույթ» (էջ 10-11): Ընդ որում, ներկայացվածի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ, մի կողմից, «դատական նախադեպը որպես հիբրիդային իրավական ինստիտուտ» հեղինակային սահմանումը վիճահարույց է դրա բովանդակային ու գործառնական

նշանակության առումով, իսկ, մյուս կողմից, որպես պաշտպանության ներկայացված դրույթ՝ հեղինակի կողմից ևս լրացուցիչ հստակեցման կարիք ունի դրա գիտականության տեսանկյունից:

գ) Աշխատանքի 2.2, 2.3 և 1.3-րդ ենթագլուխների վերլուծությունից ելնելով հեղինակը՝ որպես պաշտպանության ենթակա գիտական նորույթ դիտարկում է հետևյալները, որ. «(...) դատական պրակտիկայի ամփոփ արդյունք հանդիսացող իրավադրույթը (կամ իրավադրույթները) երկարատև գործակցության հետևանքով կարող է ճանաչվել նաև դատական նորմ», և «(...) դատական վերջնական ակտերը կարելի է դասակարգել ըստ իրավաբանական ուժի աստիճանակարգման հետևյալ կերպ՝ դատական նորմ, դատական նախադեպ, իրավական դիրքորոշում, դատական իրավադրույթ և դատական պրակտիկա:» (կետ 7, էջ 11):

Հիշյալի կապակցությամբ անհրաժեշտ է նկատել, որ ներկայացված սահմանումների բովանդակության մեջ աշխատանքի ամբողջ տեքստային մասի հետ առկա է ներքին հակասություն, ինչպես նաև դրանցում գերակշռում է վերացարկմամբ (աբստրակցիա) պայմանավորված ընդհանրացումներ, որոնք արտահայտվում են հասկացությունների, կատեգորիաների և իմացության այլ ձևերով: Այսպես, օրինակ, կարծում եմ հստակեցման կարիք ունեն հետևյալ վիճահարույց արտահայտությունները. «դատական պրակտիկայի ամփոփ արդյունք հանդիսացող իրավադրույթի երկարատև գործակցության հետևանք», կամ «դատական պրակտիկայի ամփոփ արդյունքը կարող է ճանաչվել նաև դատական նորմ», կամ «դատական ակտերը դասակարգել՝ դատական նորմ, դատական նախադեպ, իրավական դիրքորոշում, դատական իրավադրույթ և դատական պրակտիկա» և այլն:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ հեղինակի կողմից արված եզրահանգումները հիմնականում բխում են ատենախոսության ընդհանուր տրամաբանությունից, համապատասխանում առաջադրված նպատակներին ու խնդիրներին:

Ատենախոսությունը շարադրված է հասկանալի ու գիտական ոճով, հեղինակը ապահովել է նյութի շարադրանքի ներքին տրամաբանությունը:

Ատենախոսությունում պաշտպանության ներկայացված հիմնադրույթները համարժեքորեն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում:

Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ Անահիտ Նալբանդյանի՝ «Նախադեպային իրավունքի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» թեմայով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.01 գիտական թվանշանով՝ «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:


Պաշտոնական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ա.Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

3 փետրվարի 2026 թ.

Պրոֆեսոր Աշոտ Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի
աշխատակազմի ղեկավարի տեղակալ



Ա.ՄԱՐԻԻԹՅԱՆ